


«ԹՈՎ ՏՈՒՆԷՐ ՄԱՆԵՐ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՉԻՆ ԳՍՆ» : ՂՈՒԿ. ԺԸ. 16:

Հ Ա Տ Ո Ր Ե .

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ . ՆՈՅՆՄԵՐ 1 . 1876 .

ԹԻՒ 11



ԿԱՄ ՄՈՒԿԸ ԴՈՒՐՍ ՊԻՏԻ ԳԱՅ, ԿԱՄ ՊՈՅԸ ՆԵՐՍ ՊԻՏԻ ՔԱՇԷ

ՓԱՓՈՒԿ ԿԷՏ ՄԸ

Տան կատուն իր ձագերը թողուց որ իրարու պոչով խաղան և ինք գնաց միւս սենեակին մէջ մուկին ծակը դիտելու: Երբ կատուն մուկին ծակին բերանը եկաւ, հոն բան մը տեսնելով սիրաբը շուտ շուտ բարսխեց, ուստի և ինքն աչքերը դէպի ծակը անկամ նայիլ սկսաւ: Կատուն մուկի պոչ մը տեսած էր այն ծակին մէջ: Պոչը մատի չափ միայն կ'երևաւ, և ծակին մէջ անդին աստիճան կ'երթար կու գար, և անդադար մէկ

կողմէն միւսը կը դառնար: Կը հասկցուէր թէ մուկը կատուն վախը բոլորովին մարէն հանած ըլլալով ծակին մէջ կը խաղար և կը պարէր: Կատուն ձագերը տեսնելով որ իրենց մոյրը մուկին ծակին բերանը կեցած է, և բան մը կը դիտէ, եկան և հոն նստելով սկսան մուկին պոչը դիտել: Քիչ մը ետքը պոչը քանի գնաց աւելի երեւնալ սկսաւ, այնպէս որ կատուն և ձագերը կրցան պոչն ամբողջ տեսնել: Ճիշտ այն միջոցին պոչին շարժումը կեցաւ: Չէր դիտուէր

թէ մուկը դուրս պիտի գար, թէ պոչը ներս պիտի քաշէր, և ահա այս փափուկ կէտին մէջ քաշուած է վերի պատկերը: Կը տեսնէք թէ կատուն սրտարասա է մուկին վրայ յարձակիլ և զայն իր ճիրաններուն մէջ բռնել, եթէ մուկին մարմնոյն փոքր մէկ մասը ծակէն դուրս ելլէ: Կատուն ձագերը կը դիտեն թէ ինչ պիտի ըլլայ, և մենք զանոնք կը թողանք այս վիճակին մէջ, վասնզի պատկերէն չի հասկցուիր թէ մուկը բռնուեցա՞ւ, թէ ոչ:

ԲՈՒՆ ՄԱՍՏԱՆԵՆ

Ժամանակաւ մարդ մը կար որ դեղեցիկ մատանի մը ունէր, Մատանին ունէր պատուական ակ մը որ բողմանեակ պայծառ գոյներով կը փայլէր: Այն քարը զարմանալի գորտ թիւն մըն ալ ունէր, որ մատանին կրողն Աստուծոյ և մարդկան միանգամայն սիրելի կ'ընէր: Ուստի և մատանոյն տէրը շատ թանկագին կը համարէր զայն, և միշտ մատին վրայ կը կրէր: Մարդն երեք որդի ունէր, և կ'ուզէր մահուանէն ետքն իւր ամենէն սիրելի որդւոյն տալ մատանին: Սակայն տղայոց երեքն ալ սիրելի և հնազանդ էին իրենց հօրը: Վերջապէս մարդը զխոցաւ որ քիչ ատենէն պիտի մեռնի: Ի՞նչ ընելու էր: Արդաւին տալու էր մատանին: Չէր ուզեր մատանին մէկ որդւոյն տալ և միւս երկու որդիքը վշտացնել: Ուստի մարդ գրկելով մատանի շինող մը կանչել տուաւ, և անոր պատահիւրեց ուրիշ երկու մատանի շինելու մէն կերպով նման առաջ նայն: Ոսկերիչն երկու մատանի ալ շինեց այնպէս նման առաջնոյն որ նոյն իսկ հայրը չէր կրնար որոշել թէ ոյն է բուն մատանին: Մարդն իր որդիքը մէկիկ մէկիկ քովը կանչեց և իւրաքանչիւրին մէյմէկ մատանի տուաւ: Հօրը մահուանէն ետքը տղայքն իրենց մէջ վէճ բացին գիտնալու թէ ոյն է բուն մատանին: Գատաւորի մը գային և եղելով թիւնն անոր պատմեցին: Գատաւորն ըսաւ. «Լսած եմ թէ բուն մատանին այնպիսի կարողութիւն մը ունի, որ իր ստացողը շատ սիրելի կ'ընէ Աստուծոյ և մարկան: Արդ ձեռնէ ոյն աւելի սիրելի է միւս երկու եղբարց: Ինչո՞ւ լուս կը կենար: Ձեռնէ ամէն մէկը մի թէ ամենէն աւելի իւր անձը կը սիրէ: Չեղ բոսմ ինչ պէտք է ընել: Տուն գացէք և ձեռնէ իւրաքանչիւրը թող փորձէ իր մատանոյն գորտ թիւնը ցուցնել: Ով որ աւելի աղիւս, աւելի սիրուն, աւելի անձնուէր և Աստուծոյ աւելի հնազանդ է, ան է բուն մատանոյն տէրը:»

Տղայքը գիտէք ինչ կը նշանակէ այս պատմութիւնը: Գիտէք այն մատանին լուս կը նմանի: Չէր ուզեր ունենալ այնպիսի դանձ մը որ զձեզ սիրելի ընծայէ ամենուն: Մատանին «էք է: Ով որ աւելի կը սիրէ զԱստուծամ և զմարդիկ, աւելի կը սիրուի անոնցմէ:



ԱՍՏԻԿ ԱՂԱՅԻՆ ԳԻՍՆ ԱՈՂՅԻ ԳԱՅԻՆ ԿԵՅԱՆ

ԱՆՁԲԵՆԻ ԲՈՒՆՈՒՄԾ ՏՂԱՅԻ

Պետրոս, Մարիամ և Շուշանիկ գալոցէն ելլելով գալոցին մտակայ տուն մը գացին փոքր տղաքը տեսնելու, և դեռ այն տունէն մեկնած չէին, երբ անձրև գալ սկսաւ: Ամէն մարդ զարմացաւ անձրևին համար, վասն զի շատոնց ի վեր անձրև եկած չէր, և օդը պարզ էր այն օրը: Բայց Պետրոս կ'ըսէր. «Ես չեմ զարմանար որ այսօր անձրև կուգայ, քանզի դեռ երեկ իրիկուն հայրս անձրևի համար ազօթք ըրաւ:» Պետրոսի խաղակից, Յովհաննէս, հարցուց անոր. «Որովհետեւ գիտէիր թէ անձրև պիտի գար, ի՞նչու համար անձրևնոց չառիր:» «Մոռցայ,» պատասխանեց Պետրոս: Հոն գանուողները խնդացին Պետրոսի այս պատասխանին վերայ, բայց Մարիամ, «Ես իմ անձրևնոցս բերի,» ըսաւ, և պատուած մտաշած անձրևնոց մը ցուցուց: Ամէն մարդ սկսաւ խնդալ Մարիամին անձրևնոցին վրայ, որ ծակ ծակ ըլլալով չէր կրնար անձրևէ պահպանել:

Քիչ մը ետքը անձրևը դադարեցաւ, և աղայք ճամբայ ելան տուն երթալու, բայց ճամբան դարձեալ սաստիկ անձրև գալ սկսաւ: Մարիամ իր անձրևնոցը բացաւ, բայց ոչ միայն երեքը

մէկէն, այլ նոյն իսկ Մարիամ չէր կրնար անձրևնոցին տակ պահպանուիլ, ուստի ամենքը մէկտեղ Աստիկ աղային գրան առջև գացին կեցան անձրևէն պաշտպարուելու համար: Ահա յիշեալ գրան առջև կը տեսնէք զանոնք: Շուշանիկ ըսկըսաւ խորհիլ թէ այն օրը պիտի չլինային տուն հասնիլ, վասն զի ամէն կողմ ջրով լեցուած էր, և Աստիկ աղային գրան առջևի քարը միայն, ուր կեցած էին, ծռուն մէջ կզգի մը պէս կեցրէր: Քիչ մը ետքը աղայք տեսան որ փողոցէն մարդ մը կու գար, և ձեռքն ունէր երկու անձրևնոց: Երբ մարդը մտ եկաւ, աղայք տեսան որ իրենց հայրն էր, և անոնք վնասուելու կու գար, ուստի սկսան կանչել իրենց հայրը: Հայրը Շուշանիկը գիրկին առաւ, և միւս անձրևնոցը Պետրոսին տրուաւ որ Մարիամին հետ անձրևէն պատապարուէր, և այսպէս ելան տուն գացին: Պետրոս որոշեց որ երբ ուրիշ անգամ անձրևի համար ազօթք ըլլայ, հետեալ օրը հետը անձրևնոց առնել չմոռնայ:

ԳՈՒՆԻԿ ԼԵՁՈՒ

«Սիրելի որդեակս, կրթեալ անձի մը պէս խօսիլ սորվէ: Հայրդ կը վըշտանայ, երբ կը տեսնէ որ դուն գուեսիկ լեզուաւ, կը խօսիս. Թող այդ լեզուն:» «Հայրիկ, ի՞նչ է գուեսիկ լեզուն:» «Հիմա քրօղք ինչ խօսեցար:» «Ըսի անոր որ հանգարտ կենայ:» «Բայց, Չայնդ կտրէ, ըսիր, և շատ բարձր ու խիստ ձայնով խօսեցար: Եւ տասը վայրկեան առաջ Մարթային ի՞նչ ըսիր:» «Ըսի անոր որ ճամբէս դուրս ելլէ:» «Բայց այն ատեն հիմակուան խօսածիդ կիսոյն չայի մեզմով և քայցրու թեամբ խօսեցար: Քրօղք, Կորսուէ ակից՝ ըսիր: Եւ ինձ այնպէս եկաւ որ անոր անուն մին ալ կախեցիր: Ի՞նչ էր այն անունը:» Կարապետ անցաւ, և անոր աչքերէն արտասուք թափուեցան: Բայց Կարապետ ստիպուեցաւ խոստովանիլ «Քրօղք, Գարշելի կենդանի ըսի:»

«Այն, այդպէս ըսիր և ահա այդ գուեսիկ խօսք է: Բոլոր այս անարգական բառերն և մանաւանդ խիստ ձայն և վարմունք փողոցներու մէջ կը լուսին: Այն աղայք այս բառերը կը գործածեն որ լաւ կրթութիւն առած չեն: Սակայն, իմ սիրելի դուակս, դուն գուեսիկ լեզու գործածելու չես:»

ԶԳԱԿԱՆ ԽԷԺ

Երբ Երուսաղեմի քաղաքը անգամ Պրազիլիա գացին, հան շատ տեղացի Հնդիկ ցեղեր կային : Այս Հնդիկները կերակուրէն ետքը սովորաբար իրենց հիւրերուն կու տային կակուղ նիւթէ մը շինուած շիշեր, որոնց եղէգներ կապուած էին, Շիշերը ջուր խմելու համար էին : Եթէ շիշին կըր մտար ճնշուէր, ջուրը շիտակ եղէգին մէջ կ'ելէր, և անկէ բերան կ'երթար : Այն կակուղ նիւթէն ճրագ ալ կը շինուէր : Ճրագներն իբր մէկ կանդուռն երկայն և մէջը պարագ էին, և շատ աղէկ լոյս կու տային : Փորթուկացի զաւլածականը Հնդկացի հարցունելով խմացան որ այն կակուղ նիւթը գահուշու կամ դառուշու կը կոչուէր : Գառուշուը ձգական խէժն է, և հիմա Պրազիլիոյ մէջ մեծ առևտրոյ նիւթ է :



ԳՆԻՒԱՍԵՂ ԵՒ ԱՍԵՂ

Գնդասեղ մը և ասեղ մը, որ միեւնոյն կողովի մէջ իրարու դրացի էին և պարագ կը կենային, սկսան իրարու հետ վիճել, ինչպէս սովորաբար կ'ընեն անգործ մարդիկ : Գնդասեղն ասեղին ըսաւ . « Կուզեմ գիտնալ թէ դուն ի՞նչ բանի օգտակար ես, և աշխարհի մէջ ինչպէս կը յուսաս ապրիլ առանց գլուխ ունենալու : » Ասեղը պատասխանեց գնդասեղին . « Քու գլուխդ ի՞նչ օգուտ ունի, քանի որ աչք չունիս : » Գնդասեղն ըսաւ . « Ի՞նչ օգուտ աչքէ մը քանի որ անոր մէջ միշտ բան մը կայ : » Ասեղը պատասխանեց . « Ես քենէ աւելի ժիր եմ, և քենէ աւելի գործ կը տեսնեմ : » Այս ըսաւ գնդասեղը, « բայց երկար պիտի չապրիս : » « Ի՞նչու պիտի չապրիմ » ըսաւ ասեղը : « Վասնզի, » պատասխանեց գնդասեղը, « քովդ միշտ կարան մը կայ : » « Գուն ալ » ըսաւ ասեղը « ողորմելի և դիւրակեք արարած մըն ես : » « Իսկ դուն » ըսաւ գնդասեղը, « այնչափ հպարտ ես որ չես կրնար քիչ մը ծռիլ առանց կտորուելու : » Ասեղն ըսաւ գնդասեղին . « Եթէ դարձեալ զիս նախատես, քու գլուխդ կը բրցնեմ : » Գնդասեղն ըսաւ . « Եթէ դուն ինձ դպցիս, ես ալ քու աչքդ կը հանեմ, յիշէ որ կտանքդ դերձանէ մը կախում ունի : »

Այս խէժը պիտապիւնուոյ (ջերուէ ուշու) նըման մեծ ծառի մը հոյզն է, ծառին տերևներն ալ պիտապիւնուոյ տերևներուն պէս ծառին գագաթին են : Իւրաքանչիւր ծառի կեղևը ծակելով մէջը շիշ մը կը դնեն որ դեղին հիւթով մը կը լեցուի : Իւրաքանչիւր ծառ մէկ օրուան մէջ այս հիւթէն իբր հարիւր տրամ կու տայ, Հիւթը ժողովը մարդիկ կաղապարներու մէջ կը լեցունեն զայն և կրակի մօտ կամ արևին դնելով կը չորցնեն : Այսպէս հիւթը կարծրանալով կ'ըլլայ ձգական խէժ : Կաղապարներէն դուրս հանուած հիւթը թերթ թերթ է, և կը սևնայ կրակին ծուխէն : Թերթերը չորնալէն ետքը կը զրկուին Անգղիա կամ Ամերիկա : Սակայն այս վիճակին մէջ ձգական խէժը բանի չի դար . զայն աւելի կարծրացնել և մարբել պէտք է, վասնզի ձգական խէժին թերթերն այնչափ կակուղ են որ արևուն տաքութենէն կրնան հալիլ, և ամէն թերթի մէջ կան տերևի, փայտի, մազի կամ քարի կտորներ, որ հիւթին կաղապարներու մէջ չորնալէն առաջ անոր մէջ կ'իջնան : Ուստի թերթերը շատ մանր կտորներու բաժնելով ջուրի մէջ կը լուան : Այնուհետև այն մանր կտորները մեծամեծ զլաններու տակ կը դրուին և կը ճնշուին մինչև որ նորէն կը սիւղանան :

Եթէ կ'ուզեն այնչափ կարծրացնել այս նիւթը, որ կարելի ըլլայ անկէ կօշիկ կամ վերարկու կամ տղայոց համար գնդակներ շինել, խէժը կ'առնեն լուացող մեքենային տակէն և ծծումբով և ուրիշ քիմիական նիւթերով կը խառնեն : Եթէ կաղապարին մէջ դրուի շատ ծծումբ, խէժն այնպէս կարծր կ'ըլլայ որ կօշիկ զընդակ և ասանց նման բաներ շինելու չի դար : Այս աստիճան կարծր խէժը շատ սև կ'ըլլայ և ապակուոյ պէս կը յղկուի, և ամէն ձեւով կը կարուի : Այսպիսի կարծր ձգական խէժ կը շինուի դանակի կտի, դաւազան, սընտուկ, սանար, ամօռ և սեղան :

Մինչդեռ անոնք այսպէս կը վիճէին, փոքրիկ աղջիկ մը ներս մըտաւ, և կար կարել սկսելով շուտով մը ասեղին աչքը կտարեց : Այնուհետև դերձանը գնդասեղին վիզէն կախելով ջանաց անով կար կարել, բայց շատ չըջեց գնդասեղին ալ գլուխը բրցուց, և զայն աղբին մէջ ասեղին քովը նետեց : « Արդ, երկուքս ալ հոս նետուեցանք » ըսաւ ասեղը : Գնդասեղն Այսուհետև այլ ևս կուուելու և վիճելու պատճառ չունիլք : Կ'երևի թէ դժբախտութիւնը մեր խեղճը գլուխը բերաւ : ըսաւ : « Աւա՛ղ, յարեց ասեղը, « ի՞նչու աւելի կանուխ մեր խեղճը գլուխը չեկաւ : »



ԱՅՍՊԷՍ ԿԸ ՀԱՅՅՈՒՅՅԵՆ ԻՐԵՆՑ ԱՊՐՈՒՍՏԸ

ՓՈՂՈՑ ՄԱՔՐՈՂՆԵՐ

Վերի պատկերին մէջ ցուցուած փոքր տղայք և աղջկուհիք ձմեռ ատեն Անգղիոյ մեծամեծ քաղաքներուն մէջ փողոցները կը անսուին : Միշտ հին լաթեր կը հազնին և ցուրտէն կը դողան, և շատ ցուրտ և անձրևոտ օրերն անդամ երբեմն բոկոսն կը պատին : Եւրօպոյի քաղաքացի փողոցներուն երկու կողմերը լայն տեղեր կան, որոնց վրայէն կ'երթան քաղաքի գացողները և փողոցին մէջտեղի ցեխոտ անդէն չեն երթար : Վերը տեսնուած տղայք և աղջկուհիք կը կենան այնպիսի տեղեր, ուր քաղաքի գացողները կը ստիպուին փողոցին երկու կողմի լայն անդը թողուլ և մէջտեղի ցեխոտ անդէն երթալ : Զոր օրինակ այն տղայք կը կենան չորս փողոցներու իրար հանդիպած տեղը : Պատկերին մէջ կը տեսնէք որ տղայք ձեռքը աւելնել կան, որոնցմով փողոցները կ'աւելնեն և կը մաքրեն, որպէս զի անցնող մարդոց կոշիկները չցիխոտին : Այսպէս անցորդները ցիխէ մաքրուած տեղերէ կ'երթան, և այն տղայք և աղջկանց ծառայութեանը փոխարէն տասնական կամ քսանական փարա կու տան անոնց : Այն փոքրիկ տղայք և աղջկուհիք ահա այսպէս կը հայրթայրեն իրենց ապրուստը :

ՄԱՐՄՆՈՑ ՈՍԿՐՆԵՐԸ

Կարապետ օր մը իր մօրը հարցուց. «Մայրիկ, բոլոր մարմնոյս մէջ քանի՞ սակր կայ :» Կարապետ նոյն միջոցին ձեռները կը լուար, և զանոնք կը բանար կը գոցէր, և ամէն կերպով կ'օրէր կը գալարէր և յայտնի կը տեսնէր թէ ձեռքը միայն մէկ կտոր չէ, այլ շատ կտորներէ շինուած է :

Սկսաւ իր գլխոյն և մարմնոյն վրայ ալ քննութիւն ընել, Ոտքերուն և սրունքներուն նայելով տեսաւ որ անոնք ալ մանր կտորներէ շինուած են : Այսպէս աղան հետաքրքիր եղաւ իմանալու թէ բոլոր մարմնոյն մէջ քանի սակր կայ և վերի հարցումն ըրաւ մօրը : Մայրն անոր պատասխանեց. «Եթէ ըսեմ քեզ թէ բոլոր մարմնոյդ մէջ քանի սակրներ կան, շատ պիտի զարմանաս : Ինձ խօսք կու տան ըսածը միտքդ պահելու :» «Այո՛, մայրիկ, իրաւ միտքս կը պահեմ,» ըսաւ Կարապետ, և յարեց. «Հիմա ես ըսեմ նայիմ, կրնամ արդեօք ճիշդ թիւը գտնել : Կարծեմ թէ իբր յիտուն սակրներ կան :» Մայրն ըսաւ. «Աւելի քան յիտուն, երկու հարիւր ութ հաւ սակրներ կան մարդու մարմնոյն մէջ :» «Ի՞նչ, երկու հարիւր ութ հաւ սակր : Ատոր հաւատարմ չգար, գլուխս խոշոր և կլոր սակր մ'է միայն և . . .» «Կեցիր, սիրելիս, գլուխդ ոչ թէ միայն մէկ հատ կլոր և խոշոր սակր է, այլ երեսուն փոքր սակրներէ բաղկացեալ է : Յիտուն և չորս սակր կայ մարմնոյդ մէջ, երեսուն և երկու սակր կայ ուսեղ մինչև ձեռացդ մատերուն ծայրերը, և տասնեկերեք սակր կայ երաններէդ մինչև ստրի մատերուդ ծայրը :

ՍՈՒՐԲ ԳԻՐԻ ԿԱՐԿԱՅՈՂ ՓՈՒՐ ՏՂՈՑ ՀԱՄԱՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Գիշեր էր : Լուսթիւն և քուն կը տիրէին քաղաքին վրայ, միտքիւնը պատած էր ամէն տեղ, միայն աստ անդ պատահածն մը ցուցուող լուսէն կը հասկցուէր թէ տան մը մէջ զիշերն արթուն հոկոյներ հոգ կը տանէին հիւանդի մը, կամ ուրիշ տան մը մէջ անսովոր արթնութիւն մը կար : Բարձր պաշտօնատարի մը սպարանքը յուզում մը կար և հոն ժողով մը դուժարուած էր : Ներսը բարձր ձայնով կը խօսէին, հարցումներ կ'ըլլային, և պատասխաններ կը տրուէին : Մտքդ մը բանտարկեալի մը պէս կապուած էր, և յայտնի կ'երեւէր թէ անանձին կը քննուէր զատուելու համար : Գուրը գաւթին մէջ, խարուկի մը շարժը ծառաներ և ուրիշ մարդիկ ժողոված էին, և հետաքրքրութեամբ կը խօսակցէին : Երբեմն երբեմն իրենց մէջէն մէկու մը կը նայէին, և կ'երեւէր թէ կ'ամբաստանէին զանի յանի յանցանքի մը համար զոր նա կ'ուրանար : Վերջապէս ամբաստանելոյն ձայնը բարձրացաւ և անոր բերնէն երգումներ ելան : Մէկէն խօսելը դադարեցուց և գաւթին դուրս ելաւ : Գրան դուրսը նստաւ, և գաւթնային հառաչեց և ողբաց :

ՌՎ էր բանտարկեալը, ո՞վ էր այն որ գաւթին մէջ ամբաստանուեցաւ, և ի՞նչ բանի համար ամբաստանուեցաւ : Այս պատմութիւնն ո՞ր կը գտնուի :

ԱՆՅԵԱԼ ԱՄՄՈՑ ՀԱՐՅՄԱՆՑ ՊԱՏԱՍԻԱՆ

Շէնքն Երուսաղէմի տաճարն էր : Գլխաւոր շինողներն էին Զօրաբաբէլ և Յետու : Լայողներն էին ծերունիք որ տաճարն իր շքեղութեանը մէջ տեսած էին : Պատմութիւնը կը գրանուի Եզրասայ Գ. զլխոյն մէջ :

ԶԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Զար խորհուրդներն առիւծներէ և վագրերէ աւելի դէշ թշնամիներ են, վանդի կրնանք փախչիլ և զգուշանալ վայրենի գաղաններէն, բայց չար խորհուրդները միշտ և ամէն տեղ ճամբայ կը գտնեն մեր ներսի գին սպրդելու : Գաւթի մը որ բուրովին լեցուած է, աւելի բան չառներ իր մէջը : Գուր ալ ձեր գլուխն և սիրտը բարի խորհուրդներով լեցուցէք, որպէս զի չար խորհուրդները տեղ չգտնեն ներս մտնելու :

Բնաւ ձեռք մի զարնէք այնպիսի գործի մը որուն համար չէք կրնար Ատուծոյ օրհնութիւնը խնդրել և ըսել. «Ո՞վ Հայր, օրհնէ զիս այս գործիս մէջ,»

Երբ խօսքը անգամ մը բերնէն կ'ելլէ, քառածի կառք մը չկրնար անոր ետեւէն հասնիլ :

Ան օր բարիք կ'ընէ որպէս զի ուրիշներն իր ըրած բարիքը զխանան ճշմարտագէտ բարի չէ :

Ամերիկայի միախնարաց ընկերութեան կողմէն
 Խմբագիր Զ. Ք. ԿՐԻՆ
 Ֆիլանտրոպիկ եօզուու, Ամերիկան խան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԼՈՍ
 ՏԻՊՈԳՐԱԿԱՆ ԱՐՄԱՆԵՆ
 Զագագոցըր, Յակոբյան խան, Թիւ 12.